ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ՄԵՏԱՂՅԱ ՍՊԱՍՔՆԵՐԸ

ՍՏԵՓԱՆ ԵՍԱՅԱՆ

Հայաստանի միջին և ուշ բրոնզի դարաշրջանների հնագիտական հուշարձանների պեղումներից հայտնաբերված բազմաքանակ իրերի մեջ առանձնանում է տոհմացեղային ավագանու կողմից զանգվածաբար օգտագործվող մետաղյա գտածոների մի ոչ մեծ խումբ՝ բաղկացած կաթսաներից, գավաթներից, թասերից և այլն։ Այս իրերի մի մասը ձևերով, հրաշալի հարդարանքով և զարդանախշման մոտիվներով դեկորատիվ-կիրառական արվեստի հոյակապ ներտվածքներ են, իսկ մյուսները՝ առօրյա գործածության առարկաներ։ Ըստ կիրառական նշանակության, այս իրերը բաժանվում են մի շարք տիպերի, որոնց մի մասը հարատևում է քննարկվող ամբողջ ժամանակաշրջանում, իսկ մնացածը որևէ որոշակի ժամանակահատվածում։

Առավել հետաքրքիր նմուշներ են հայտնի Կիրովականի հանրահայտ, միջին բրոնզի դարի վերջով (մ. թ. ա. XVII—XVI դդ.) թվագրվող դամբարանաբլուրից, ուր տարատեսակ խեցանոթների, զենքերի և այլ իրերի հետ գտնվել են արծաթե գավաթներ, դույլ, թաս և երեք զույգ առյուծների պատկերներով զարդարված հրաշալի ոսկե գավաթ։ Այդ ժամանակաշրջանին է վերաբերում նաև Լոռի բերդից, Արաքսից և Երևանից գտնված իրերի մի մասը։ Պակաս հետաքրքիր չեն Լճաշենի, Արթիկի, Լոռի բերդի և այլ հարուստ դամբարանաբլուրներից ու դամբարաններից պեղված նյութերը, որոնք թվագրվում են ուշ բրոնզի դարի տարբեր փուլերով (մ. թ. ա. XV—XII դդ.)։

Մետաղյա սպասքի առավել բնորոշ խումբն են կազմում կաթսաները, որոնք պատրաստված են երկու-երեք պղնձե կամ բրոնզե թիթեղներից և իրենց ձևերով բաժանվում են մի շարք տիպերի։ Այս իրերի առաջին տիպը ներկայացված է Կիրովականի դամբարանաբլուրից, Լոռի բերդից, Արուճից և Երևանից գտնված նմուշներով։ Կիրովականյան օրինակը խոշոր, պղնձե երկու թիթեղից դուրգամված անոթ է։ Սրա բարձր (36 սմ), ուղիղ իրանը կենտրոնում մի փոքր նեղանում է։ Հատակը կլորավուն է, պատրաստված՝ ամբողջական թիթեղից (աղ. I, նկ. 2)։ Դրան ձևով շատ մոտ է Արուճից գտնված կաթսան, որն առաջինից տարբերվում է միայն փոքր-ինչ ավելի հարթ հատակով (աղ. I, նկ. 1)[2]։ Երկուսի կանթերն էլ գամերով ամրացված են իրանի վերին մասին և ուղղահայաց բարձրանում են շուրթից վեր։ Լոռի բերդի № 6 դամբարանից գտնված կաթսան ունի 33 սմ բարձրություն[3]։ Նրա գրեթե ուղիղ իրանը վերին մասում մի փոքր նեղանում է։ Կիսակլոր հատակը իրանին ամրացված է գամերով, որոնց խոշոր գլխամասերը մեխի գլխիկ են հիշեցնում։ Կանթերը նման են կիրովականյան կաթսայի կանթերին, բայց իրանին ամրացված են ոչ թե մեկ, այլ երեք գամով (աղ. I, նկ. 5)։ Երևանի օրինակը գտնվել է «Ավտոագրեգատ» գործարանի տարածքում[4]։ Այս օրինակը, ձևով և չափերով մոտ լինելով լոռիբերդյան կաթսային, դրանից էականորեն տարբերվում է կանթի ձևերով։ Կաթսայի իրանը երկու կողմից ամուր գրկող այս կանթերն ատամնավոր են և լրացուցիչ ամրացված են գամերով (աղ. I, նկ. 6)։ Նման կաթսաներ հայտնի են Թռեղքի № 5 և 15 գամբարանաբլուրներից, որոնց նյութերը բնորոշ են միջին բրոնզի դարաշրջանի Թռեղք-կիրովականյան մշակույթին[5]։

---

[1] Б. Б. Пиотровский, Археология Закавказья, Л., 1949, с. 47; А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, с. 65.

[2] Գ. Արեշյան, Հ. Սիմոնյան, Գ. Սարգսյան, Հայագիտական կենտրոնի 1976 թվականի դաշտային հնագիտական աշխատանքները («Բանբեր Երևանի համալսարանի», 1977, № 3, էջ 272, նկ. 2)։

[3] С. Г. Деведжян, Лори-Берд 1, Ереван, 1981, с. 21, табл. II, рис. 4.

[4] Ա. Փիլիպոսյանի պեղումներից. նյութերը պատրաստվում են հրատարակության։

[5] Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, Тбилиси, 1941. табл XV—XVI; Э. М. Гогадзе, Периодизация и генезис курганной культуры Триалети, Тбилиси, 1972, табл. 7, рис. 19, табл. 12, рис. 12.

Հին Հայաստանի կաթսաների երկրորդ տիպը ներկայացված է Լճաշենից, Լոռի բերդից, Շիրակավանից և Արծվաբերդից (Ղազի) գտնված մի քանի անոթներով, որոնք հանգես են գալիս ուշ բրոնզի վաղ փուլում և հարատևում են մինչև մ. թ. ա. I հազ. սկիզբը։ Սրանք բոլորն էլ ունեն խոշոր, կլորավուն իրան և հատակ, կլորավուն կամ ուղիղ, շուրթի վերածվող, թեքությամբ ներսացող ուսեր։ Այս կաթսաներն իրարից տարբերվում են հիմնականում չափե-



Աղյուսակ I

րով և կանթերի ձևերով։ Հատկապես մեծ բազմազանությամբ են աչքի ընկնում Լճաշենի մ. թ. ա. XIV—XIII դդ. հարուստ դամբարաններից գտնված կաթսաները։ Սրանցից երկուսը (աղ. I, նկ. 7)[6] ունեն կլորավուն հատակ և իրան, թեք ուսեր և փոքր ինչ կլորացող, դուրս ճկված շուրթ։ Կիսակլոր կանթերը, որոնք հակադիր կողմերի վրա ճկված ստորին մասով ամրացված են անոթի եզրերին, բարձրանում են շուրթից վեր։ Թվում է, թե այս կաթսաները պատրաստված են ամբողջական թիթեղից, որը, դատելով դրանց ձևերից, տեխնիկապես անհնար է։ Ըստ երևույթին, դրանք պատրաստված են իրար զոդված երկու առանձին թիթեղներից։ Զոդման հարթեցված կարը օքսիդի շերտի տակ չի երևում։ Այս ենթադրությունը անհրաժեշտ է ճշտել ռենտգենոսկոպիկ մեթոդների օգնությամբ։ Եթե այն ճիշտ է, ապա զոդման միջոցով կաթսաների պատրաստման եղանակը տեխնոլոգիական մեծ առաջընթաց է՝ ի համեմատ միջին բրոնզի դարի մետաղյա սպասքի պատրաստման եղանակների։ Հատկապես հետաքրքիր է երրորդ կաթսան, որից պահպանվել է անոթի վերին մասը (աղ. I, նկ. 9)[7]։ Ի տարբերություն մյուսների, սրա

6 Հայաստանի պատմության պետական թանգարան (այսուհետև՝ ՀՊՊԹ), գույք № 2009/607, 2049/103։

7 ՀՊՊԹ, գույք № 2007/18։

ճկված շուրթի միջով բրոնզե լար է անցնում, որը լրացուցիչ ամրություն է հաղորդում վերշինիս։ Այս տիպին է վերաբերում նաև մ. թ. ա. XIV—XII դդ. թվագրվող, Շիրակավանից գտնված կաթսաներից մեկը (աղ. 1, նկ. 11)[8]։ Ստ նույնպես ունի կլորավուն հատակ և իրան, ուղիղ կտրված շուրթի վերածվող թեք ուսեր։ Կանթերի ձևով այն չի առանձնանում։ Սակայն, ի տարբերություն Լճաշենի նմուշների, սրա շուրթի տակ, անոթի իրանին, շուրթին լրացուցիչ ամրություն տալու և ծռմռվելուց ապահովելու համար, դուրգամված են մի քանի բրոնզե թիթեղներ։ Այս տիպին պայմանականորեն կարելի է վերագրել Լոռի բերդի № 2 դամբարանից գտնված կաթսան[9], որն ունի ավելի երկարավուն իրան։ Կանթերը չեն պահպանվել, որոնց առկայության մասին վկայում են շուրթի տակ դամերի համար արված անցքերը (աղ. I, նկ. 3)։

Այս տիպի մեկ առանձին տարբերակ են կազմում Լճաշենի[10] (աղ. I, նկ. 10) և Շիրակավանի (աղ. II, նկ. 2) դամբարաններից գտնված երկու կաթսան։ Երկուսն էլ ունեն նըշվածներին նմանվող իրան, բայց զանազանվում են կանթերի ձևերով։ Այս անոթների կտրվածքում հարթ կանթերն ամրացված են ուսերի կենտրոնական մասում և կորանալով իջնում են իրանի վերին մասի վրա։ Այս տարբերակին կարելի է վերագրել Շամշադինի շրջանի Արծվաբերդ գյուղի մոտ գտնվող Բուղաքար դամբարանադաշտից հայտնաբերված նմանօրինակ կաթսան (աղ. 11, նկ. 1)[11], որը մյուսներց զատվում է կանթերի ձևերով։ Կանթերից մեկը, որ պատրաստվել է կաթսայի հետ մեկտեղ, կտրվածքում կիսակլոր է և արտաքին երեսից զարդարված է երեք ռելիեֆ գծերով։ Հարթ ապաբանշանից պատրաստված երկրորդ կանթը ամրացվել է հետագայում։ Զարդարված է զիգզագ գծերով և կետերով։ Այս տիպին է դասվում նաև Լճաշենից գտնված մեկ այլ կաթսայի պահպանված հատվածը, որը նույնպես առանձնանում է կանթերի ձևերով[12]։ Պահպանվել են կողերի մի մասը և կլորավուն, ոլորած շուրթը։ Շուրթի տակ, հակադիր կողերի վրա ամրացված են հարթ, կենտրոնում անցքով, ոչ մեծ (2 սմ բարձրության) ուղղահայաց կանթեր։ Հետաքրքիր է նշել, որ մ. թ. ա. 1 հազարամյակի հուշարձաններում նման կանթերը լայն տարածում են գտնում խեցանոթների վրա, որը վկայում է հնագույն բրուտների կողմից մետաղյա անոթների ձևերի ընդօրինակման մասին։

Կաթսաների Երրորդ տիպը ներկայացված է Լոռի բերդից (մ. թ. ա. XIV—XIII դդ.), Արթիկից (մ. թ. ա. XII—XI դդ.) գտնված անոթների մի փոքր խմբով։ Լոռի բերդի № 7 դամբարանից[13] գտնված կաթսան ունի ամրություն հաղորդելու համար ոլորած շուրթ, կիսագնդաձև իրան (աղ. I, նկ. 4)։ Սրա գալարուն, բարձր կանթը (մյուսը պոկվել է հնում), երկրորդ տիպի կաթսաների կանթերի նման, ամրացված է անոթի ուսին և բարձրանում է շուրթից վեր։ Հակադիր կողմերի վրա թեքված կանթի ստորին մասի երկու ծայրերը յուրաքանչյուր կողմից ունեն 22 սմ երկարություն, որով, ինչպես և Շիրակավանի կաթսայի շուրթերին դուրգամված թիթեղները, լրացուցիչ ամրություն է տրվել նրան։

Իր ձևերով Լոռիբերդյան օրինակին մոտ է կանգնած Արթիկից գտնված կաթսան (աղ. II, նկ. 10)։ Այն ունի վերին մասից հատած ձվածիր իրան, դուրս ճկված կլորավուն շուրթ[14]։ Կաթսայի երեք օղակաձև կանթերից յուրաքանչյուրի ստորին ծայրերը երկուական դամերով ամրացված են անոթի կողերին։ Իրենց ձևերով և ամրացման եղանակով այս կանթերը հիշեցնում են ուշ բրոնզի վաղ փուլով թվագրվող Լճաշենի խեցանոթների բռնակները[15]։ Այստեղ գտնված կճուճների դեկորատիվ բռնակները զարդարված են վերադիր ծեփած օղակներով, որոնք դամերի գլխիկներ են նմանակում։ Ինչպես տեսնում ենք, այս կավանոթներում նույնպես նկատվում է մետաղյա անոթների ձևերի կրկնությունը։ Դա հաստատվում է նաև նրանով, որ նշված կճուճների բռնակները ստորին մասում ճկված են հակադիր կողմերի վրա, որը նկատվում է նաև Լճաշենից, Լոռի բերդից և Շիրակավանից գտնված ուշ բրոնզի վաղ փուլի կաթ-

---

8 Օ. Խնկիկյանի պեղումներից. նյութերը հրատարակված չեն։

9 С. Г. Деведжян, նշվ. աշխ., էջ 33, աղ. VI, նկ. 2։

10 ՀՊՊԹ, գույք № 2009/62։

11 С. А. Есаян, Древняя культура племени северо-восточной Армении, Ереван, 1976, табл. 131. рис. 7.

12 ՀՊՊԹ գույք № 2007/108։

13 С. Г. Деведжян, նշվ. աշխ., էջ 33, աղ. VI, նկ. I։

14 Т. С. Хачатрян, Древняя культура Ширака. Ереван ,1975, с. 218, рис. 130..

15 А. О. Мнацаканян, О двухцветной керамике Лчашена (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1957, № 5, էջ 109, նկ 2)։

սաներում, որոնց կանթերը նույն եղանակով ամրացված են անոթի ուսերին։ Ախթալայի կաթսան, որի մեջ բրոնզե իրերի գանձ գտնվեց, պատրաստված է բրոնզե կոփածո թիթեղներից (աղ. II, նկ. 4)։ Այն, ինչպես և լոռիբերդյան օրինակը, ունի կլորավուն իրան և հատակ, սակայն ուսերը ոչ թե թեքվում են. այլ մի փոքր գոգավոր են։ Կանթերից մեկը (մյուսը չի պահպանվել), զարդարված է ցանցանախշերով, բարձրանում է շուրթից վեր, իսկ ներքին, հակադիր ծայրերը դուրգամված են անոթի կողերին։

Աղյուսակ II

Ցարդարդ տիպի կաթսաները հայտնի են Հայկական բարձրավանդակի ծայր հյուսիս-արևելքում տեղաբաշխված հուշարձաններից, հատկապես արդի Ադրբեջանական ՍԱՀ Դաշքեսանի շրջանի Ջովդար գյուղի մոտի դամբարաններից[16] և թվագրվում են ուշ բրոնզի դարաշրջանի վերջին փուլով։ Սրանցից մեկը գտնվել է 1928 թ. Դ. Շարիֆովի պեղած № 11 դամբարանից։ Ըստ հեղինակի, այն պատրաստված է կոփածո պղնձե թիթեղից (հավանորեն, լճաշենյան օրինակների նման, այս կաթսան էլ պատրաստված է իրար զոդված երկու թիթեղից), ունի հատած կոնի ձև և կլորավուն հատակ։ Շուրթը փոքր ինչ դուրս է ճկված։ Հակադիր ուսերին դուրգամված են ձևավոր, պղնձե թիթեղի շերտեր, որոնց ծայրերը վերածվում են օղակաձև ունկի, ուր մտնում են ձողերից պատրաստված (տրամագիծը կտրվածքում՝ 1 սմ) սեղանաձև կանթերը։ Կաթ-

[16] Г. Кесамали, Медные котлы эпохи поздней бронзы из Азербайджана («Краткие сообщения Института археологии» (այսուհետև՝ КСИА), вып. 108, М., 1966, с. 79—80, рис. 26).

սայի շուրթը և կանթերը զարդարված են ալիքաձև կրկնակի գծերով (աղ. II, նկ. 6)։ Երկրորդ կաթսան Ջուղարի ծայրամասի հողային աշխատանքների ժամանակ գտել է Ռ. Պետրոսյանը (աղ. II, նկ. 3)։ Այն ևս պատրաստված է մեկ ամբողջական պղնձե թիթեղից և ունի նույն ձևը։ Շուրթի տակով անցնում է 4 սմ լայնությամբ պղնձե գոտի։ Ջողով արված, արմնկաձև կանթերը, որոնց ծայրերը տափակեցված են ու կտրված առանցքի երկարությամբ, շուրթը գրկում են երկու կողմից և լրացուցիչ կերպով ամրացված են գամերով։ Կանթերի դուրգամվելու եղանակը հիշեցնում է Երևանից գտնված միջին բրոնզի դարաշրջանի կաթսայի կանթերի ամրացման ձևը։ Դա վկայում է հնադույն Հայաստանի արհեստագործության տեխնիկական եղանակների ավանդականության և ժառանգականության մասին։ Ինչ վերաբերում է Դ. Շարիֆովի պեղած կաթսային, ապա սրա կանթերը, ի տարբերություն վերը նշված բոլոր օրինակների, կիպ չեն ամրացված, այլ ազատ շարժվում են ունկերում, որը հնարավորություն է տալիս այն համարել Հայաստանի և ժամանակակից անդրկովկասյան կաթսաների կանթերի նախատիպ։

Քննարկվող ժամանակահատվածում թասերը ներկայացված են երկու օրինակով։ Սրանցից մեկը պատրաստված է արծաթից (աղ. II, նկ. 5), գտնվել է Կիրովականի դամբարանադաշտից. բրոնզե կաթսայի հետ։ Թասն առանձնանում է իր պարզությամբ և նրբագեղությամբ։ Այն ունի հատած շրջանի ձև, նկատելիորեն հաստացված, ուղիղ կտրած շուրթ։ Շուրթի տակ արված է հորիզոնական ձգվող, շեղանկյուն զարդանախշ, որ երկու կողմից ուրվագծված է զիգզագ գծերով։ Իրանի ներքին մասը զարդարված է երեք խումբ յոթական կիսաշրջաններով։ Այս զարդանախշերն իրենց ձևերով կապվում են Կարմիր բերդից[17], Դառնիից,[18], Կիրովականից[19] հայտնի, միջին բրոնզի սկզբով թվագրվող գունազարդ, միագույն կավանոթների զարդանախշման մոտիվներին։ Երկրորդ թասը գտնվել է Արթիկի № 575 դամբարանից և թվագրվում է ուշ բրոնզի վերջին փուլով (մ. թ. ա. XII—XI դդ.)։ Այն պատրաստված է բրոնզից, ունի ուղիղ կտրած եզրերով կիսակլոր իրան (աղ. II, նկ. 11)[20]։ Նման թասեր հայտնի են Թռեղքի բրոնզի դարաշրջանի հուշարձաններից[21], հանդիպում են նաև երկաթի դարաշրջանում։

Հաջորդ խումբը կազմում են Կիրովականի միջին բրոնզի դարաշրջանի դամբարանաբլուրներից գտնված կավանոթները։ Այս խմբում հատկապես առանձնանում են արծաթյա երկու գավաթներ։ Մեկը բարձր է, փոքր ինչ լայնացող ուղիղ պատերով, թեթևակի դուրս ճկված շուրթով և հարթ հատակով (աղ. II, նկ. 15)։ Երկրորդը ավելի ցածրադիր է, կլորավուն, ուռուցիկ իրանով։ Շուրթի ձևով նման է առաջինին (աղ. II, նկ. 13)։ Ի տարբերություն առաջինի, վերջինիս հատակը նաև նստուկ ունի։ Երկու գավաթներն էլ ունեն ուղիղ, շուրթից վեր բարձրացող, դեպի իրանի կենտրոնը տարված կանթեր։ Իրենց ձևերով այս կանթերն առնչվում են Ոսկեվազից գտնված կավանոթների բռնակներին, ինչպես նաև դիտարկվող ժամանակաշրջանի Ալաչա-Հուլուկից և Փոքր Ասիայի արևմտյան շրջաններից հայտնի խեթական ոճի անոթների կանթերին[22]։ Այս գավաթները հնարավորություն են տալիս ենթադրելու, որ մետաղամշակության զարգացման արշալույսին վարպետ-ձուլողները նմանակել են խեցեգործական բարձրարվեստ նմուշները, երբեմն նաև զարդանախշերի մոտիվները։ Այդ է վկայում Կիրովականի դամբարանադաշտից գտնված արծաթյա թասը։

Ինչպես հայտնի է, կետազարդ շեղանկյունիներով զարդանախշը հանդես է գալիս արդեն վաղ բրոնզի դարաշրջանի վերջում։ Այս հանգամանքը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ այստեղ առաջին անգամ առկա է գունազարդ կավանոթների վրա արված զարդամոտիվները մետաղյա անոթներին փոխանցելու երևույթը, որն հատկապես հստակ երևում է լճաշենյան կավանոթների, ինչպես նաև Ուզերլիկի կավե գավաթների ձևերից ու զարդանախշերից[23]։ Նշենք,

---

17 С. А. Есаян, Ереван (археологический очерк), Ереван, 1969, с .20.

18 Է. Վ. Խանզադյան, Դառնի 4-րդ, Երևան, 1969, տախտ. II։

19 Նույն տեղում, նկ. 82։

20 Т. С. Хачатрян, նշվ. աշխ., էջ 220, նկ. 131։

21 Б. А. Куфтин, նշվ. աշխ., էջ 17, նկ. 18։

22 Г. Е. Арешян, Малоазийские формы в керамике Армении среднего бронзового века («Советская археология», 1973, № 4, с. 45—47).

23 К. Х. Кушнарева, Поселение эпохи бронзы на холме Узерлик-тепе около Агдама («Материалы и исследования археологии СССР», 1959, № 67, рис. 12, 13, 15); А. А. Мартиросян, նշվ. աշխ., էջ 65։

որ հետագայում տեղի է ունենում հակադարձ պրոցեսը, երբ խեցեգործության մեջ լայնորեն կիրառվում է մետաղյա անոթներին նմանակելը։

Հետաքրքիր գտածո է Կիրովականի դամբարանաբլուրից հայտնաբերված արծաթյա դույլը։ Սա իրանի կառուցվածքով նմանվում է վերը նկարագրած առաջին գավաթին։ Իրանի վերին մասում ամրացված է աղեղնաձև, երկար կանթը (աղ. II, նկ. 14)։ Իրանի ձևով այն առնչվում է նաև Թռեղքի մ. թ. ա. XVI դ. դամբարանից[24] և Ալտչա-Հուլուկից գտնված գավաթներին, իսկ ունկի կողքային մասով և հատակի ձևով Վաֆիայից գտնվածներին[25]։ Ինչպես արդեն նշվեց, Կիրովականի դամբարանաբլուրի գտածոների մեջ եզակի նմուշ է ոսկյա գավաթը (աղ. II, նկ. 7)[26]։ Այն ոսկե բարակ թիթեղից պատրաստված, կլորավուն, ուռուցիկ իրանով, մի փոքր դուրս ճկված շուրթով միականթ անոթ է (կանթը կոտրվել է հնում)։ Հատակն ունի բարձր, լայնացող նստուկ, շուրթի տակով անցնում է թույլ արված երկշար ոլորանախշ, իսկ անոթի ստորին մասով՝ երկար, դիզզագ զարդագոտի։ Այս երկու զարդամոտիվների միջակա տարածքում դրոշմված են երեք զույգ, երախները բաց, դեմ-դիմաց կանգնած առյուծներ։ Այս թասը ձևով հիշեցնում է Թռեղքի № 6 դամբարանաբլուրից գտնված անգարդ, ոսկյա թասը, իսկ առյուծների պատկերները՝ № 15 դամբարանաբլուրի ոսկյա գավաթի թմբուկի վրա արված առյուծներին[27]։

Հնագույն դեկորատիվ-կիրառական արվեստի բարձրարժեք նմուշներ լինելով՝ այս բոլոր անոթներն իրենց տարբերակներով բազմաթիվ զուգահեռներ ունեն Առաջավոր Ասիայի և Միջերկրականի երկրների արվեստում։ Դրանց ու համաժամանակյա խեցանոթների միշտ եղած ձևերի և զարդամոտիվների մեծ ընդհանրության առկայությունը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ քննարկվող անոթները տեղական արտադրանքի նմուշներ են՝ առաջավորասիական բարձր կանգնած մշակույթի ազդեցությամբ հանդերձ, որի բաղկացուցիչ մասն է կազմել նաև Հայկական լեռնաշխարհի ցեղերի արվեստը։ Բացի տյդ, մետաղի արտադրությունն ավելի հին ավանդույթներ է ունեցել, քան կարող ենք ենթադրել այսօր։ Դա հիմնվում է այն փաստի վրա, որ քննարկվող ժամանակաշրջանում, ինչպես և հետագա դարերում Հայաստանի և Անդրկովկասի խեցանոթները կրկնում են Կիրովականի և Թռեղքի ոսկյա գավաթների ձևերը, որոնց համեմատականները տեսնում ենք Լճաշենի, Ուզերլիկ-Թեփեի, Մրծեռնակաբերդի, Օսթիայի կավե գավաթների մեջ։ Այս հանգամանքը հստակ վկայում է այն մասին, որ բրոնզներն արդեն քաջ ծանոթ էին այդ իրերին և հաճախ ընդօրինակում էին մետաղյա անոթների հաստատուն ձևերը[28]։

Հայաստանում լայնորեն կիրառվող խոհանոցային սպասքի մասն են կազմում բրոնզե կեռիկները, որոնք ձևով բաժանվում են մի քանի տիպի։ Առաջին տիպին են վերաբերում Կիրովականից[29], Լճաշենից[30], Լոռի բերդից[31] և Թաքիայից[32] գտնված, 14—22 սմ երկարություն ունեցող բրոնզե կեռիկները, որոնք ստորաբաժանվում են երկու տարբերակի։ Առաջին տարբերակին են պատկանում Կիրովականի (աղ. III, նկ. 8), Լոռի բերդի (աղ. III, նկ. 7) կեռիկները, որոնք գտնվել են վերը նշված կաթսաների հետ և թվագրվում են միջին բրոնզի դարի վերջով։ Նրանք ունեն փայտյա բռնակն ամրացնելու համար մեկ միջանցիկ անցքով սնամեջ, խողովակաձև կոթառ, որը վերածվում է կիսակլոր, ճկած, սրածայր ձողի։ Նման պղնձե կեռիկ, որ թվագրվում է մ. թ. ա. III հազարամյակի վերջով, հայտնի է Էշերիի երկրորդ դամբարանաբլու-

---

24 Б. А. Куфтин, նշվ. աշխ., աղ. CII։

25 Г. Е. Арешян, նշվ. հոդվ., էջ 48։

26 Б. А. Куфтин, նշվ. աշխ., աղ. C, CI։

27 Б. Б. Пиотровский, Новые данные о древнейших цивилизациях на территории СССР, М., 1953, с. 5—6.

28 К. Х. Кушнарева, նշվ. աշխ., էջ 94· С. А. Есаян, Ереван, с. 43.

29 Т. С. Хачатрян, Орудия труда эпохи поздней бронзы и раннего железа Армении («Труды Государственного исторического музея Армении», т. V, Ереван, 1959, с. 222).

30 ՀՊՊԹ, դույլ № 2007/112։

31 С. Г. Деведжян, նշվ. աշխ., էջ 22, աղ. II, նկ. 5։

32 Т. С. Хачатрян, Орудия труда эпохи поздней бронзы и раннего железа Армении, с. 127, рис. 55.

րից[33], Երկրորդ տարբերակն են կազմում Լճաշենից (աղ. III, նկ. 2) և Թաքիայից (աղ III, նկ. 5) գտնված կեռիկները, որոնք կառուցվածքով նման են առաջիններին, զանազանվում են միայն սուր ծայրի ավելի թույլ ճկվածությամբ և ունեն մանգաղի ձև Թաքիայի օրինակն ունի մի տարբերություն ևս. նրա կոթառը ճկման տեղից մինչև հակառակ ծայրը լցված է կտրծր շաղախով։



Աղյուսակ III

Կեռիկների երկրորդ տիպին են վերաբերում Լճաշենից գտնված օրինակները, որոնք հատույթում կլոր, 63—65 սմ երկարության, երկու ծայրերը հակադիր ծռված ձողեր են (աղ. III, նկ. 9)[34]։ Դրանք հաճախ հանդիպում են կաթսաների հետ, որն ուսումնասիրողներին հիմք է տվել ենթադրելու, որ այդ կեռիկներն օգտագործվել են կաթսաներից միս հանելու համար։ Սակայն սխալ կլինի կարծել, որ նման երկարության կեռիկներն օգտագործվել են կաթսաներից միս հանելու համար միայն։ Ըստ երևույթին, սրանք գործածվել են նաև թոնիրներից և օջախներից ինչպես միս, այնպես էլ այլ կերակուրներ հանելու համար, կատարել են նաև կրակխառնիչի դեր։

Տոլորսից գտնված օրինակը պատկանում է կեռիկների երրորդ տիպին։ Ճկման ձևով այն մոտենում է Լճաշենի և Թաքիայի կեռիկներին (աղ. III, նկ. 6), սակայն, ի տարբերություն

---

33 М. М. Иващенко, Исследования археологических памятников материальной культуры в Абхазии, Тбилиси, 1936, с. 29, табл. XI, рис. 3.

34 ՀՊԹԲ, գույք № 2009/384։

մնացած բոլորի, խողովակաձև կոթառի փոխարեն ունի երկար կոթ, որին հագցվել է փայտյա բռնակը։ Կոթի վերին մասը վերածվում է ռելիեֆ զարդերով նախշված, փոքր ինչ լայնացող խողովակի, ուր մտցվել է բռնակը[35]։ Նույն ձևն ունի նաև Ղարաբաղից (Բալուկայա և Սիրխովենդե գյուղի մոտ գտնվող №1 դամբարանաբլուրից)[36] գտնված կեռիկը։ Ցավոք, սրա կոթը չարդված է, բայց հիմքի մոտ երևում են վրան հագցված բրոնզե ազի հետքեր։

Մետաղյա սպասքի ոչ մեծ, բայց շատ հետաքրքիր խումբ են կազմում բրոնզե շերեփները։ Հնագույն օրինակը մ. թ. ա. XIV—XIII դդ. թվագրվող, Լճաշենից գտնված նմուշն է[37]։ Այն ունի ուղիղ, հաստացող շուրթով (տրամագիծը՝ 9 սմ) կլորավուն, ուռուցիկ իրան, սնամեջ, 18 սմ երկարությամբ բռնակ, որը կազմված է սնամեջ, սեպաձև, ցանցկեն զարդերով պատված խողովակներից, որոնք հագցվել են փայտյա հիմքին։ Բռնակն ավարտվում է ստորին մասին զոդված չորս ակնաձաղով անիվով՝ վրան նստած, խիստ ոճավորված թռչունի քանդակով (աղ. II, նկ. 9)։ Մեկ այլ շերեփ գտնվել է մ. թ. ա. XII—XI դդ. թվագրվող Արթիկի № 335 դամբարանից[38]։ Այն ունի կլորավուն, ուռուցիկ իրան և ուղիղ կտրված շուրթ, որի տակով անցնում է խոր ակոսադոտի։ Հատակը նույնպես կլորավուն է (տրամագիծը՝ 39 սմ)։ Մի եզրին չորս մեխով զուրգամված է սնամեջ բռնակը, որը, 12 սմ ձգվելով, ծնկաձև ձուլվում է իրանին և իջնում մինչև հատակ։ Բռնակն արտաքին երեսից զարդարված է ուռուցիկ ելուստներով, ճկված մասը՝ V-աձև ցանցկեն կտրվածքներով, ոլորանախշ, զիգզագ, օղակաձև զարդանախշով, իսկ հիմքը՝ տասը թերթիկներից կազմված պսակով (աղ. II, նկ. 8)։ Այս նույն դամբարանում գտնվել է մեկ շերեփ ևս, որն իրանի ձևով (տրամագիծը՝ 15 սմ) մոտենում է առաջինին, և որի բռնակը երկու երկար (72 սմ), ճկված կեռիկներով ավարտվող ձող է[39]։

Եզակի նմուշ է Լոռի բերդի մ. թ. ա. XII դ. թվագրվող դամբարաններից մեկում գտնված շերեփը[40]։ Հարթ շուրթով իրանը ուռուցիկ է (տրամագիծը՝ 22 սմ, բարձր՝ 8 սմ)։ Շերեփի եզրերը զարդարված են չորս ռելիեֆ գծերով, որոնք անոթին տալիս են հորիզոնական-ծալքավոր տեսք և լրացուցիչ ամրություն։ Մի կողմից անոթի եզրին չորս դամերով ամրացված է սնամեջ, ուղղանկյուն բռնակ, որն ամբողջովին զարդարված է ցանցկեն, եռանկյունաձև և սեպաձև կտրվածքներով։ Բռնակին մեշքով ամրացված է արմունկները ծալած, առաջ պարզած թևերով ռազմիկի ֆալլիկ արձանիկ։ Ձեռքը բռունցք է արված։ Ինչպես հայտնի է հին Հայաստանի նմանատիպ արձանիկներից, ձեռքերի նման ձևը խոսում է այն մասին, որ դրանց պետք է ամրացված լինեին նիզակ, դուրգ, կենաց ծառ կամ այլ առարկաներ, որոնք չեն պահպանվել։ Արձանիկը սնամեջ է, ձուլված՝ մոմե կաղապարում։ Այն միջահասակ, լայն կրծքով, ոտքերը մի փոքր բացած, հստակ արտահայտված ֆալլուսով զինվոր է։ Աջ ազդրին ունի կտրվածքով արված կեռախաչ և սեպաձև նախշեր։ Կուրծքը և ձեռքերը զարդարված են ցանցկեն սեպանախշերով։ Բարակ վզի վրա՝ զանգվածեղ գլուխը ծածկված է ցածրադիր, սեպաձև փոսիկներով զարդարված սաղավարտով, որը գրեթե ամբողջովին զարդարված է բարձր կատարով։ Հստակ ընդգծված են դեմքի մանրամասները՝ զանգվածեղ, առաջ ճկած կզակը, փոքր, նշաձև աչքերը, ուղիղ քիթը և ամուր սեղմված բերանը։ Շերեփի բռնակի հակադիր ծերտին զոդված է սրածայր, բարձր եղջյուրներով այծի ոչ մեծ քանդակ։ Իրանը զարդարված է երեք սեպաձև փոսիկներով, իսկ գավակին ոչ մեծ, դուրս ցցված պոչ է արված (աղ. III, նկ. 1)։

Եզակի է նաև Ջարխեչից գտնված շերեփը[41]։ Այն ունի բարձր, հարթ նստուկով, կլորավուն, ձվաձև իրան և հարթ, լայն շուրթ։ Մի եզրին ամրացված է կեռածայր մուճակներ հա-

---

35 А. О. Мнацаканян, Находки предметов бронзового века из села Толорс (Зангезур) АрмССР («Краткие сообщения Института истории материальной культуры», 1954, № 54, с. 101—110); Т. С. Хачатрян, Орудия труда эпохи поздней бронзы и раннего железа Армении, с. 227.

36 К. Х. Кушнарева, Некоторые памятники эпохи поздней бронзы в Нагорном Карабахе («Советская археология», 1957, № XXVIII, с. 147, рис. 10).

37 А. О. Мнацаканян, Лчашенские курганы (КСИА, 1961, вып. 85, рис. 24).

38 Т. С. Хачатрян, Древняя культура Ширака, с. 218, рис. 130.

39 Նույն տեղում։

40 Ս. Դևեջյանը այս շերեփը հրատարակել է ամսագրում, առանց խորագրի («Սովետական Հայաստան», 1981, № 8, էջ 39)։

41 С. А. Есаян, Древняя культура племен северо-восточной Армении, с. 243, табл. 113.

դած, ծնկները ծալած մարդկային ոտքի պատկերով բռնակը։ Ոչ մեծ գծիկներով, կետերով և գալարագծերով ընդգծված են ներբանները, կրունկը և դուրս ցցված մատները։ Ոտքի կրունկից դեպի նստուկը նեղ մետաղի ձող է ամրացված, որով դրանք միանում են։ Ծնկին ու ներբանի վերին մասին զոդված են ոչ մեծ օղեր։ Շերեփի եզրերը զարդարված են «վազող գալարներիս» գոտիով։ Թեք գծերով և գծիկներով ուրվագծված նման զարդանախշ անցնում է բռնակի վերին մասով։ Թեք գծերով է զարդարված նաև կրունկը նստուկին միացնող ձողը (աղ. II, նկ. 32)։

Անդրկովկասում բրոնզե շերեփներ գրեթե չեն հանդիպում։ Որքան հայտնի է, մեկ օրինակ գտնվել է Մելանիից (Կախեթ), որը շերեփի հեռավոր նմանություն ունի միայն։ Այն խոշոր իրանով, լայն նստուկով, բարձր, փոքր ինչ կլորավուն եզրերով և ուղիղ շուրթով անոթ է։ Ամբողջ իրանը և հատակի կենտրոնական մասը ներսի կողմից զարդարված են դրվագված օղակաձև զարդերով։ Եզրերից մեկին ամրացված է զույգ լարով բռնակը[42]։

Անհրաժեշտ է նշել, որ վերը նկարագրած իրերի մի մասը, հատկապես շերեփները, զարդարված են երկնքի և արևի պաշտամունքի հետ կապված զարդամոտիվներով։ Ջարխեչի և Արթիկի շերեփները զարդարված են «վազող գալարներով», որոնք խորհրդանշում են արևի հավերժական շարժումը երկնակամարում։ Լճաշենի շերեփի բռնակը զարդարող խաչը խորհրդանշում է արեր, իսկ թռչունը՝ երկինքը։ Նույն սիմվոլները նկատվում են լոռիբերդյան շերեփի վրա, որտեղ զինվորի մարմինը զարդարող կեռախաչը նույնպես խորհրդանշում է արևը, իսկ զինվորը կարող էր խորհրդանշել արևի գերագույն աստվածությունը։ Այս շերեփները կեռախաչով զարդարված աղորիքների, խաչով զարդարված ձեռքերի, «սրբազան կավե հացերի» հետ մեկ խումբ են կազմում, և կարելի է ենթադրել, որ այդ իրերի միջոցով ստացված կամ օգտագործված նյութերը՝ ալյուր, յուղ, գինի, հատուկ կաղապարներում թխված «կավե հացերը», օգտագործում էին քրմերը այս կամ այն հավատալիքի հետ կապված ծիսական արարողությունների ժամանակ։

Քննարկվող նյութերը հստակ ցույց են տալիս, որ միշտ և ուշ բրոնզի դարաշրջանում, որը սկիզբ էր առել դեռևս մ. թ. ա. III հազարամյակում[43], Հայաստանում սոցիալական շերտավորումը հասնում է իր զարգացման բարձրակետին։ Այս դարաշրջանը խորհրդանշում է խոշոր ցեղային միությունների կազմավորումը, որոնց առաջնորդներն ու ավագանին լայնորեն օգտագործում էին «շքեղ զարդարված» զենքեր, զարդեր, խեցեղեն, մետաղյա սպասք և այլն, որոնք, հանդես գալով թաղումներն ուղեկցող նյութի ձևով, բնութագրում են հին մշակույթի էությունը, մինչ այդ լտեսնված յուրահատկությամբ և «բարբարոսական շքեղությամբ»[44]։ Այս նյութերը միաժամանակ վկայում են մետաղամշակման բարձր զարգացման, դրանց պատրաստման և հարատևման եղանակների, համաձուլվածքների որակի բարձրացման մասին, որը տարբեր տոհմացեղային կենտրոններում աշխատող և իրենց գաղտնիքներն ու հմտությունները սերնդեսերունդ փոխանցող ժողովրդական վարպետների տքնաջան աշխատանքի արդյունք էր։

Այս նմուշների մի մասը ոսկե գավաթը և արծաթե թասը, լոռիբերդյան շերեփը, հետաքրքիր նյութ են հին Հայաստանի կերպարվեստն ուսումնասիրելու համար։ Հնագույն արձանագրության այս անկրկնելի նմուշները առաջավորասիական բարձր զարգացած մշակույթի բաղկացուցիչ մասն են։ Հատկապես հետաքրքիր են վերը նշված կիրովականյան արծաթե գավաթների և թասի ձևերն ու զարդամոտիվները, որոնք վկայում են մ. թ. ա. III հազ. վերջի, II հազ. սկզբի կավանոթների ձևերի՝ մ. թ. ա. II հազ. կեսերի մետաղյա անոթներին ժառանգաբար փոխանցվելու մասին։ Միևնույն ժամանակ ուշ շրջանի կավանոթներն են կրկնում Կիրովականի ոսկե գավաթի, լոռիբերդյան, Շիրակավանի II հազ. կեսերի կաթսաների ձևերը։ Այս հանգամանքը մի կողմից վկայում է հին Հայաստանի նյութական արտադրության ավանդական ձևերի շարունակման, մյուս կողմից նոր ձևերի՝ թասեր, շերեփներ, հանդես գալու մասին, որոնք իրենց հերթին շարունակում են ավանդաբար օգտագործվել հետագա դարերում։ Այսպես՝ Լճաշենյան կաթսաների որոշ տեսակներ հանդես են գալիս մ. թ. ա. XIV դարում և հարատևում մինչև վաղ երկաթի դարաշրջանը (մ. թ. ա. IX—VIII դդ.), իսկ Արթիկի բրոնզե թասի ձևերը՝ մինչև մ. թ. ա. VII դ.։

---

[42] О. Н. Пицхелаури, Древняя культура племен, населяющих территорию Иоро-Алазанского бассейна, Тбилиси, 1965, табл. XVIII, рис. 2.

[43] С. А. Есаян, Ереван, с. 24.

[44] Б. А. Куфтин, նշվ. աշխ., էջ 88; Б. Б. Пиотровский, Археология Закавказья, с. 45.

МЕТАЛЛИЧЕСКАЯ УТВАРЬ АРМЕНИИ ЭПОХИ БРОНЗЫ

СТЕПАН ЕСАЯН

Резюме

Домашняя утварь древней Армении, состоящая из различных котлов, кубков, чаш, ведерка, черепков, кружек и изготовленная из бронзы, реже—серебра и золота, по своим морфологическим формам делится на ряд типов. Часть сосудов того или иного типа бытует на протяжении определенного времени, а другая продолжает бытовать и в последующие эпохи, что говорит о традиционной связи материальной культуры Армении и появлении иноваций в отдельно взятые эпохи.

На ранних фазах при изготовлении металлических сосудов наблюдается определенное подражание формам и орнаментальным мотивам керамических изделий, а в последующем происходит обратный процесс, когда гончары широко применяют металлические формы.

Часть рассматриваемых предметов, представляющая собой высокохудожественные изделия и имеющая огромную стоимость, принадлежала представителям родоплеменной знати, что свидетельствует о глубокой социальной дифференциации в общественной жизни древних армян.

Золотой кубок и серебряная чаша из Кировакана, черпалки из Лчашена, Лори-Берда и Артика, судя по их орнаментальным мотивам, были связаны с культами неба, солнца, плодородия и применялись при различных ритуалах, посвященных этим культам.

Близость форм рассматриваемых изделий с переднеазиатскими свидетельствует о том, что культура древних армян имела тесные связи с переднеазиатскими племенами.